10030087

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N3

Հեռ.՝ (+374 10) 58 24 13
Ֆաքս՝ (+374 10) 56 27 83
Էլ. փոստ՝ minister@moh.am

09.11.2011 N ՀՖ/11-1/10327-11
Ձեր N ____________

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա.ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ջավադյան

Ձեր 28.10.2011 թվականի N 15.1-07/1129-11 գրության կապակցությամբ, կից Ձեզ է ներկայացվում «ՀՀ Քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», ««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առողջապահության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

Կատարող՝ Անի Մանուչարյան
Իրավաբանական վարչություն
Հեռ. 565681

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի N 1104-Ն որոշման պահանջներով

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«ՀՀ Քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», ««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում**

«ՀՀ Քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», ««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա կունենա դրական ազդեցություն՝ հաշվի առնելով, որ բժշկի կողմից ապահովագրական հանգամանքների կամ վնասի չափի վերաբերյալ ակնհայտ սխալ տեղեկատվություն տրամադրելու համար քրեական պատասխանատվություն սահմանելը կբարձրացնի բժշկական փորձաքննությունների որակը և դրանով իսկ՝ բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի մակարդակը:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Հ.ՔՈՒՇԿՅԱՆ